

Վիրահայոց թեմում հավատացյալներին բաժանվեցին զատկական նվերներ

Մարտի 30-ին, Տիրոջ և Փրկչի` Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով Սուրբ Զատկի նախօրեին, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմում հավատացյալներին բաժանվեցին զատկական նվերներ: Բարեգործական

1 / 4



Վիրահայոց թեմում հավատացյալներին բաժանվեցին զատկական նվերներ

գործողությունը
նախաձեռնել
էին
Վիրահայոց
Թեմի
հոգևոր
դասը
,
Վրաստանում
ՀՀ
դեսպանությունը
,
Վրաստանի
հայ
կանանց
«
Շուշանիկ
»
միությունը
,

2 / 4

երիտասարդ կամավորները և անհատ բարերարներ: Նախքան նվերների բաժանումը Վիր
ահայոց
Թեմի
առաջնորդ
Գերաշնորհ
Տեր
Վազգեն
եպիսկոպոս
Միրզախանյանը
օրհնության
խոսք
ասաց
Թբիլիսիի
Սուրբ
Էջմիածին
Եկեղեցու
հոգևոր
դասին
,
Վրաստանում
ՀՀ
դեսպանությանը՝
հանձին
առաջին
քարտուղար
Լևոն
Թորգոմյանի
և
շնորհակալագրեր
հանձնեց
այն
անհատ
բարերարներին
,
ովքեր
հոգու
կանչով
և
պատրաստած
նվերներով
եկել
էին
շնորհավորելու
հայ
տարեց
հավատացյալների

Վիրահայոց թեմում հավատացյալներին բաժանվեցին զատկական նվերներ

Սուրբ Զատիկը :

Եկեղեցում հավաքված հավատացյալները և բարեգործական գործողության մասնակիցները Սրբազան Հոր և հոգևոր դասի հետ աղոթք բարձրացրին ի փառս Հայ Եկեղեցուն և ամենազոր Աստծուն :

4 / 4